

16

ՄԱՅԻՍԻ
2023

Luys



Lnyu®



ARMENIANS

STOP
AZERBAIJANI
AGGRESSION

ARTSAKH
IS ARMENIA

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԶԺԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ
ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Վարդան Պողոսյան
միջազգայնագետ, քաղաքագետ (M.A., Bonn)



Ինքնորոշման իրավունքը Արցախի անկախության իրավական հիմքն է. ԽՍՀՄ գոյության ժամանակ Արցախն ինքնորոշվել է՝ նախ անջատվելով Ադրբեջանական ԽՍՀ-ից, այնուհետև՝ ԽՍՀՄ-ից, հենվելով ինչպես խորհրդային, այնպես էլ միջազգային իրավունքով սահմանված ինքնորոշման իրավունքի վրա: Ընդգծելով և կարևորելով ինքնորոշման իրավունքը՝ որպես Արցախի Հանրապետության անկախության *իրավական* հիմք, միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ Արցախի Հանրապետությունը անկախ պետություն է՝ անկախ անկախության ձեռքբերման այդ հիմքից: Պետության առաջացումը փաստի խնդիր է. այն անկախ է այն բանից, թե ինչպես է ստեղծվել պետությունը՝ քաղաքացիական պատերազմի, հեղափոխության, պետության փլուզման արդյունքում, թե՛ հենվելով որևէ իրավունքի վրա: Միջազգային իրավունքը, որոշակի բացառություններով, ընդունում է պետության իրողությունը՝ ելնելով նրանից, թե արդյո՞ք փաստացի առկա են պետականության հատկանիշները: Այդ առումով Արցախի Հանրապետությունն անկախ պետություն է, որովհետև.

1. Բավարարում է միջազգային իրավունքում պետականությանը ներկայացվող բոլոր չափանիշներին (I):

2. Պետության գոյությունը անկախ է նրա միջազգային իրավական ճանաչումից. պետության գոյությունը չի պայմանավորվում նրա ճանաչմամբ, իսկ չճանաչումը չի նշանակում, որ չճանաչված պետությունները չունեն միջազգային-իրավական կարգավիճակ (II):

3. Երբ միջազգային իրավունքն ընդունում է պետության գոյությունը՝ անկախ իր ստեղծման հանգամանքներից, ապա այն այդ պետությանը դնում է իր պաշտպանության ներքո: Դա հատկապես վերաբերում է այդ պետության նկատմամբ ուժի կիրառման արգելքին (III):

I. ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. Պետության ստեղծումը որպես առաջնային փաստ

Միջազգային իրավունքի տեսանկյունից պետությունը գոյություն ունի այն ժամանակ, երբ պետական իշխանությունը տվյալ տարածքի վրա այնքան է ինքնահաստատվել, որ կարող է մասնակցել միջազգային հարաբերություններին և կատարել իր միջազգային պարտավորությունները: Պետությունը կարող է առաջանալ տարբեր ձևերով՝ հեղափոխություն, պատերազմ, նախկինում անկախ պետությունների միավորում, պետությունից անջատում՝ մայր պետության համաձայնությամբ կամ առանց դրա և այլն: Պետության առաջացման ձևերի նման բազմազան են նաև պետության ստեղծման իրավական եղանակները: Սակայն, անկախ դրանցից, իրավական առումով վճռորոշ նշանակություն ունի միայն տվյալ տարածքում նոր իշխանության փաստի ստեղծումը, պետության գործառույթների ստանձնումը նրա մարմինների կողմից: Պետության ստեղծումը միջազգային իրավունքի տեսանկյունից միշտ իրավական փաստ է, այլ ոչ թե իրավական ակտ, նույնիսկ այն դեպքում, երբ այդ փաստը հիմնված է իրավական ակտի վրա, օրինակ՝ մայր պետության և անջատվող պետության միջև պայմանագրի: Պետության առաջացումը ոչ թե իրավաբանական, այլ փաստացի գործընթաց է¹:

Պետությունը միջազգային իրավունքի իմաստով պարզապես իրավաբանական անձ չէ, որի ստեղծման պայմանները սահմանվում են իրավունքի միջոցով: Այն առաջին հերթին առաջնային փաստ է, որն ընդունվում է իրավունքի կողմից: Առաջնային փաստը նշանակում է մի փաստ, որը նախորդում է իրավունքին², ինչպես, օրինակ, այն նոր սոցիալական կամքը, որը տվյալ տարածքում արտահայտվում է սահմանադիր ժողովի միջոցով: Իրավունքն ի գիտություն է ընդունում այդ փաստը, երբ այն առկա է, և կարող է դրան վերագրել որոշակի հետևանքներ, ներառյալ՝ որոշակի իրավական կարգավիճակ: Իրավունքը, սակայն, ուղղակիորեն չի վերահսկում այն գործընթացի ընթացքը, որը ծնունդ է տալիս պետությանը: Իրավունքը կարող է խրախուսել կամ չխրախուսել պետության առաջացումը, բայց այն չի կարող ուղղակիորեն ստեղծել կամ ոչնչացնել առաջնային փաստը: Այստեղ տեղին է ուղղակի զուգահեռը ֆիզիկական անձանց հետ այն առումով, որ օրենքը կարող է խրախուսել կամ չխրախուսել ծնելիությունը, բայց չի

¹ Պետությունների ստեղծման վերաբերյալ տե՛ս, մասնավորապես, George Abi-Saab, "The Effectivity Required of an Entity that Declares its Independence in Order for it to be Considered a State in International Law", in: Anne F. Bayefsky (ed.), Quebec and Lessons Learned. Legal Opinions, York University, Toronto 2000, էջ. 69-74: Georg Dahm, Jost Delbrück, Rüdiger Wolfrum, Völkerrecht Bd I-1 Die Grundlagen. Die Völkerrechtssubjekte, 2., völlig neu bearbeitete Auflage, Berlin, New York 1989, էջ 125-156: James Crawford, The Creation of States in International Law, 2. ed., Oxford, 2006:

² Abi-Saab, նշվ. աշխ., էջ 70:

կարող «առաջացնել» մարդու ծնունդ. ծնվելուց հետո է միայն իրավունքն անդրադարձ կատարում ֆիզիկական անձի գոյությանը³:

Նոր պետության առաջացումը քաղաքական և սոցիալական գործընթաց է, որը պետք է դատել ըստ էֆեկտիվության սկզբունքի⁴: Այն, ճիշտ ինչպես մարդու ծնունդը, ի սկզբանե փաստի հարց է և ոչ թե իրավունքի, և միայն փաստի առաջացման հետ է իրավունքը նախատեսում որոշակի իրավական հետևանքներ: Դեռևս դասական միջազգային իրավունքում ընդունված այս մոտեցումը արձանագրվել է նաև Հարավսլավիայի համաժողովի արբիտրաժային հանձնաժողովի (այսպես կոչված՝ Բադինտերի հանձնաժողովի) 1991 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1 կարծիքում, ըստ որի՝ «պետության գոյությունը կամ անհետացումը փաստի հարց է»⁵:

2. Պետականություն չափանիշները

Արձանագրելով, որ պետության ստեղծումը փաստի խնդիր է, պետք է միևնույն ժամանակ նկատի ունենալ, որ, Ջ. Քրաուֆորդի սրամիտ բնորոշմամբ, պետությունը «փաստ չէ այն իմաստով, որ աթող փաստ է. [դա] իրավական կարգավիճակ է, որը որոշակի կանոնների կամ գործելակերպի ուժով զուգակցվում է որոշակի փաստերի ամբողջության հետ»⁶: Ուստի, պետությունների ստեղծման պարագայում միջազգային իրավունքը պետք է որոշի, թե փաստերի ո՞ր տարրերը պետք է առկա լինեն, որպեսզի առաջանան որոշակի իրավական հետևանքներ: Հետևաբար, այն պետք է փաստացի իրադարձությունների հոսքից առանձնացնի առանձին չափանիշներ և դրանք կապի իրավական հետևանքների հետ⁷:

Բադինտերի հանձնաժողովը 1991 թվականի նոյեմբերի 29-ի կարծիքում արձանագրում է, որ միջազգային հանրային իրավունքի սկզբունքների հիման վրա են որոշվում այն պայմանները, որոնց առկայության դեպքում կազմավորումները հանդիսանում են պետություն⁸: Ուստի, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշվի, թե արդյո՞ք խնդրո առարկա կազմավորումը փաստացի ունի պետականության սահմանված հատկանիշները, թե՞ ոչ:

³ Նույն տեղում:

⁴ Knut Ipsen, Völkerrecht, 7., völlig neu bearbeitete Auflage, 2018, էջ 165: H. Ruiz Fabri, "Genèse et disparition de l'État à l'époque contemporaine", in: Annuaire français de droit international, AFDI 38 (1992), էջ 153; Charles de Visscher, Les Effectivités du droit international public, Paris 1967, էջ 34-35:

⁵ Alain Pellet, "The Opinions of the Badinter Arbitration Committee A Second Breath for the Self-Determination of Peoples", in: European Journal of International Law, Volume 3, Issue 1, 1992, էջ 182: 2003թ. հոկտեմբերի 22-ի որոշման մեջ Քվեբեկի գերագույն դատարանը նույնպես նշել է. «Պետության ծնունդն ու գոյությունը փաստի հարց է». <https://opil.ouplaw.com/display/10.1093/law:ilcd/181ca03.case.1/law-ilcd-181ca03>, կ. 59:

⁶ Crawford, նշվ. աշխ., էջ 37: Jan Brownlie, Principles of Public International Law, 7. ed., Oxford 2008, էջ 5:

⁷ Alfred Verdross, Bruno Simma, Universelles Völkerrecht. Theorie und Praxis. 3. Auflage, Berlin 1984, էջ 600:

⁸ Pellet, նշվ. աշխ., էջ 182:

Միջազգային իրավունքում լայն ճանաչում ունի այն մոտեցումը, ըստ որի պետություն որակվելու համար նվազագույն պարտադիր տարրեր են հանդիսանում՝ որոշակի տարածքը, մշտական բնակչությունը և արդյունավետ հանրային իշխանությունը⁹: 20-րդ դարի սկզբում ավստրիացի հանրաճանաչ իրավագետ Գեորգ Ելինեկի հիմնադրած պետության երեք տարրերի այդ դոկտրինը¹⁰ շատ արագ գերիշխող դարձավ ոչ միայն միջազգային իրավունքի գիտության, այլ նաև միջազգային իրավունքի պրակտիկայում: Պետականության «դասական» այս չափանիշները սահմանված են 1933թ. Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին Մոնտեվիդեոյի կոնվենցիայի 1-ին հոդվածում. «Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ պետք է ունենա հետևյալ որակները՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն և դ) այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն»:

Ըստ Բադինտերի հանձնաժողովի թիվ 1 կարծիքի՝ «պետությունը սովորաբար սահմանվում է որպես հանրույթ, որը բաղկացած է տարածքից և կազմակերպված քաղաքական իշխանությանը ենթակա բնակչությունից»¹¹: Վճռորոշ տարրը արդյունավետ կառավարությունն է, որը մարմնավորում է պետության ինքնիշխանությունը և կախված չէ որևէ այլ ատյանից: Արդյունավետությունը կարող է հարցականի տակ լինել, եթե կառավարությունը չի կարողանում վերահսկողություն իրականացնել բնակչության նկատմամբ՝ իշխանություն իրականացնելու առումով, կամ էլ երբ նրա իշխանությունը խաթարվում է այլ ատյանների կողմից:

3. Արցախի արդյունավետ պետականությունը

1991թ. Լեռնային Ղարաբաղը խորհրդային Սահմանադրության համաձայն՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում էր գտնվում¹²: Երբ 1991թ. դեկտեմբերին ԽՍՀՄ-ը դադարեց գոյություն ունենալուց, նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածում հռչակվել էին և փաստացի գոյություն ունեին երկու պետություններ՝ Ադրբեջանական Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը¹³: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը (1991թ. սեպտեմբերի 2¹⁴) և նրա

⁹ Տե՛ս, մասնավորապես, Crawford, նշվ. աշխ., էջ 37: Brownlie, նշվ. աշխ., էջ 69:

¹⁰ Georg Jellinek, Allgemeine Staatslehre, Berlin 1900, էջ 355-393:

¹¹ Pellet, նշվ. աշխ., էջ 182:

¹² ԽՍՀՄ Սահմանադրության 87-րդ հոդվածի 3-րդ մաս:

¹³ Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах. Статьи, материалы, документы, Ереван 1995:

¹⁴ ԼՂՀ հռչակման դրդապատճառների մասին տե՛ս, մասնավորապես, Сурен Золян Нагорный Карабах. проблема и конфликт, Ереван 2001, էջ 138 և հաջորդիվ:

<http://karabakhcenter.com/files/file/zolyan.pdf>:

անկախության հռչակումը (1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով¹⁵) լիովին համապատասխանում էին Խորհրդային Միության իրավունքով և միջազգային իրավունքով սահմանված ժողովուրդների ինքնորոշման իրավունքին¹⁶: Սակայն, նույնիսկ եթե 1991թ. ո՛չ ԽՍՀՄ օրենսդրությունը և ո՛չ միջազգային իրավունքը չպարունակեր ժողովուրդների ինքնորոշման իրավունք (ինչպես մինչև 1945թ.), ապա, միևնույն է, Արցախի ժողովուրդը միջազգային իրավունքին համապատասխան իրավասու էր 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակելու իր անկախությունը Ադրբեջանական ԽՍՀ-ից, իսկ 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով՝ ԽՍՀՄ-ից: ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունն աներկբայորեն սահմանում է, որ «ընդհանուր միջազգային իրավունքը անկախության հռչակման կիրառելի ոչ մի արգելք չի պարունակում»¹⁷: Անկախության հռչակումից հետո Արցախը կարող էր միջազգային իրավունքի կողմից դիտվել որպես անկախ պետություն, եթե հաստատեր արդյունավետ հանրային իշխանություն իր տարածքում՝ բացառելով նման իշխանության իրականացումը Ադրբեջանի կողմից: Անհերքելի փաստ է, որ Արցախի ժողովրդին և նրա կողմից հիմնադրած իշխանություններին դա հաջողվել է: Ադրբեջանական կենտրոնական իշխանության վերջին ներկայացուցիչները Լեռնային Ղարաբաղի տարածքը լքել են դեռևս Խորհրդային Միության գոյության ժամանակ՝ 1991թ. աշնանը, երբ արդեն ակնհայտ էր, որ Խորհրդային Միությունը փլուզվում է¹⁸: Առնվազն այդ պահից սկսած իր անկախությունը հռչակած Ադրբեջանը որևէ հանրային իշխանական ֆունկցիաներ Արցախի նկատմամբ չի իրականացրել: Կորցնելով վերահսկողությունը Արցախի նկատմամբ՝ նույն ժամանակահատվածում Ադրբեջանն առավել սաստկացրեց իր զինված հարձակումները Արցախի առանձին բնակավայրերի վրա, ինչը 1992թ. արդեն վերածվեց լայնածավալ ռազմական գործողությունների¹⁹:

1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեից հետո ԼՂՀ-ում 1991թ. դեկտեմբերի 28-ին անցկացվեցին Գերագույն խորհրդի ընտրություններ, ինչի արդյունքում 1992թ. հունվարին ձևավորվեց առաջին գումարման ԼՂՀ Գերագույն խորհուրդը: 1992թ. հունվարի 6-ին խորհրդարանն ընդունեց ԼՂՀ պետական

¹⁵ Հանրաքվեի վերաբերյալ տե՛ս, մասնավորապես, Аветик Арутюнян, Сирануш Петикян, Роль референдума о независимости Республики Арцах в деле построения государственности//Кавказ в геополитических интересах региональных и мировых держав : сборник научных статей. Ростов-на-Дону – Степанакерт: ДГТУ-Принт, 2018, էջ 52–67: <https://shorturl.at/efmwN>:

¹⁶ Այս հարցը առանձին ուսումնասիրության առարկա է:

¹⁷ Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo Advisory Opinion of 22 July 2010, Para. 84. <https://www.icj-cij.org/public/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>.

¹⁸ Роберт Кочарян, Жизнь и свобода, Москва 2019, էջ 117:

¹⁹ Իրադարձությունների ժամանակագրության վերաբերյալ տե՛ս, մասնավորապես, Ваган Арутюнян, События в Нагорном Карабахе. Хроника. Часть IV, Ереван 1994, Часть V, Ереван 1997:

անկախության մասին հռչակագիրը, իսկ հունվարի 8-ին՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքը: ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընտրեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահին և Գերագույն խորհրդի քարտուղարին, ինչպես նաև նշանակեց ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահին: Սկսվեց անկախ պետականության ձևավորման գործընթացը²⁰:

Արցախի Հանրապետությունն ունի ամբողջովին ձևավորված գործունակ պետական իշխանություն, որն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման դասական սկզբունքի հիման վրա: Նրա պետական մարմինները գործում են Սահմանադրության հիման վրա, որն իր մշակման և ընդունման գործընթացներով և բովանդակությամբ համապատասխանում է ժողովրդավարական ու իրավական պետությունը բնորոշող բոլոր չափորոշիչներին: Անկախության ձեռքբերումից ի վեր Արցախն ընդունել է երկու Սահմանադրություն՝ 2006թ. դեկտեմբերի 10-ին և 2017թ. փետրվարի 20-ին: Արցախի առաջին Սահմանադրությունը²¹ նախատեսում էր կիսանախագահական կառավարման համակարգ՝ երկաստիճան գործադիր իշխանությամբ: Հանրապետության նախագահն ընտրվում էր ժողովրդի կողմից 5 տարով՝ անընդմեջ երկու անգամ պաշտոնավարելու հնարավորությամբ: Օրենսդիր իշխանությունը վերապահված էր խորհրդարանին, որը բաղկացած էր ժողովրդավարական սկզբունքներով ընտրվող 33 պատգամավորներից: 2017թ. փետրվարի 20-ին Արցախը հանրաքվեով ընդունեց նոր Սահմանադրություն²², որով կիսանախագահական կառավարման համակարգը փոխարինվեց հավասարակշռված նախագահական համակարգով: Հանրապետության նախագահը, որը շարունակում է ընտրվել ժողովրդի կողմից, և՛ պետության գլուխն է, և՛ կառավարության ղեկավարը, այսինքն՝ մարմնավորում է գործադիր իշխանությունը: Արցախի Ազգային ժողովն ունի ուժեղ հակակշռող լիազորություններ: Հանրապետության նախագահի նկատմամբ խորհրդարանն օժտված է ոչ միայն ավանդական պառլամենտական վերահսկողության իրավունքներով, այլև ունի նաև իր անդամների 2/3-ով քաղաքական պատճառներով անվստահություն հայտնելու իրավունք: Դատական իշխանությունը ուժեղացված է ի հաշիվ նրա, որ դատավորներն այլևս չեն նշանակվում Հանրապետության նախագահի կողմից, այլ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ ընտրվում են խորհրդարանի կողմից: Արցախի նոր Սահմանադրությունն ամրագրում է հիմնական իրավունքների ժամանակակից լայն ցանկ և դրանց ապահովման գործում երաշխիքներ: Արցախում 1994-ից սկսած անցկացված

²⁰ Արցախի անկախ պետականության ձևավորման գործընթացի վերաբերյալ տե՛ս, մասնավորապես, Վահրամ Բալայան, Դրվագներ Արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1819-2007), Ստեփանակերտ, 2012, էջ 302 և հաջորդիվ:

²¹ http://president.nkr.am/media/documents/constitution/constitution_am.pdf:

²² <http://president.nkr.am/media/documents/constitution/Constitution2017.pdf>:

նախագահական բոլոր ընտրությունները եղել են մրցակցային, որի արդյունքում ներկայումս պաշտոնավարում է Արցախի Հանրապետության արդեն թվով 4-րդ Հանրապետության նախագահը:

Հարկ է արձանագրել, որ Freedom House հեղինակավոր կազմակերպությունը Ադրբեջանին մշտապես բնութագրել է որպես «անազատ» պետություն, տեղավորելով նրան սանդղակի ամենացածր աստիճանին, մինչդեռ Արցախն արդեն տարիներ շարունակ գնահատվում է որպես «կիսաազատ»²³:

4. Արցախի ներգրավվածությունը միջազգային հարաբերություններում

Չնայած այն հանգամանքին, որ Լեռնային Ղարաբաղը չի ճանաչվել որևէ պետության կողմից, այդուհանդերձ, ղարաբաղյան հակամարտության ծագումից ի վեր ԼՂՀ ներկայացուցիչները ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված են եղել տարբեր միջազգային հարթակներով ընթացող բանակցային գործընթացում: 1992-1997թթ. Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության կողմ անմիջականորեն մասնակցել է Մինսկի խմբի աշխատանքներին: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղի իշխանությունները բավական հաճախ ներկայացրել են միանգամայն ինքնուրույն դիրքորոշումներ, որոնք տարբերվել են Հայաստանի Հանրապետության դիրքորոշումից:

1993թ. կնքված բոլոր հրադադարների կողմեր են հանդիսացել միայն Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանը: Մինչև 1994թ. մայիսի 9-11-ի զինադադարը կնքվել են թվով 10 ժամանակավոր լոկալ հրադադարներ²⁴, որոնք ստորագրվել են ԼՂՀ և Ադրբեջանի զինվորական ղեկավարների կողմից: Դրանցով Ադրբեջանը փաստացիորեն ճանաչել է Լեռնային Ղարաբաղին՝ որպես հակամարտող կողմ: Երբ 1993թ. ամռանը ադրբեջանական զորքերը պարտությունը պարտության հետևից էին կրում, Ադրբեջանում նորից իշխանության եկած Հ. Ալիևը ռուսական միջնորդությամբ փորձում էր կազմակերպել իր հանդիպումը Ռ. Քոչարյանի հետ: 1993թ. հուլիսի 24-ին և 25-ին նույնաբովանդակ նամակների փոխանակման միջոցով Ադրբեջանի պաշտպանության նախարարի պաշտոնակատար Ս. Աբիևը և Լեռնային Ղարաբաղի Զորքերի հրամանատար Ս. Բաբայանը ռազմական գործողությունները 3 օրով դադարեցնելու պարտավորություն ստանձնեցին, որպեսզի համաձայնություն ձեռք բերվի «Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպման» վերաբերյալ (ընդգծումը հեղինակինն է): Ս. Աբիևի նամակն ուղղված էր «Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարությանը», բանակի հրամանատար Ս. Բաբայանին (ընդգծումը հեղինակինն է): 1993թ. օգոստոսի 5-ին Ս. Աբիևի և «Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարար» Ս. Սարգսյանի միջև կնքվում

²³ <https://freedomhouse.org/country/nagorno-karabakh/freedom-world/2023>:

²⁴ В. Казимиров, Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта. М.: Междунар. отношения, 2009, էջ 160:

է համաձայնագիր՝ նախկինում կայացված ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ համաձայնությունը երկարաձգելու մասին, որպեսզի համաձայնություն ձեռք բերվի «Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպման» վերաբերյալ: 1993թ. օգոստոսի 17-ին Հ. Ալիևը լիազորում է փոխվարչապետ Ռ. Գուլիսին՝ բանակցություններ անցկացնել «Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի բարձրագույն ղեկավարների հանդիպման» կազմակերպման համար (ընդգծումը հեղինակինն է): 1993թ. սեպտեմբերի 12-ին և 13-ին Մոսկվայում տեղի են ունենում Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարության ներկայացուցիչներ Ա. Զալիլովի և Ա. Ղուկասյանի բանակցությունները, որոնց վերաբերյալ ընդունվում է համատեղ կոմյունիկե: Կոմյունիկեում արձանագրվում է, որ «մանրամասն քննարկվել են Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպման նախապատրաստական աշխատանքները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել այն անցկացնելու, ինչպես նաև տարբեր մակարդակներով կապեր պահպանելու վերաբերյալ»²⁵: Այդ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց երկարաձգել զինադադարը մինչև 1993թ. հոկտեմբերի 5-ը, ինչը հնարավորություն տվեց Ադրբեջանին հրադադարի պայմաններում անցկացնել Ադրբեջանի նախագահի ընտրությունները: 1993թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում տեղի ունեցավ Ռ. Քոչարյան - Հ. Ալիև բարձրագույն մակարդակի հանդիպումը, որից հետո, հակառակ հանդիպումները շարունակելու պայմանավորվածությանը, ադրբեջանական կողմը կտրուկ դադարեցրեց շփումները Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ:

5. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բոլոր չորս բանաձևերը, որոնք ընդունել են 1993թ. ապրիլից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում²⁶, հաշվի են առել այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993թ. ապրիլի 30-ին ընդունած իր առաջին՝ թիվ 822 բանաձևում ուղղակիորեն ընդգծել է, որ Քելբաջարի շրջանը գրավվել է «տեղական հայկական ուժերի» կողմից²⁷: Չնայած հետագա բանաձևերում նման ձևակերպում

²⁵ Нагорный Карабах в международном праве и мировой политике: Документы и комментарии. Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. Ю.Г. Барсегов. Москва 2008, էջ 739: Казимиров В., նշվ. աշխ., էջ 101:

²⁶ ՄԱԿ ԱԽ բանաձևեր հ. 822, 30.4.1993, հ. 853, 29.7.1993, հ. 874, 14.10.1993 և հ. 884, 12.11.1993: <https://digitallibrary.un.org/record/165604>; <https://digitallibrary.un.org/record/170257>; <https://digitallibrary.un.org/record/174420>; <https://digitallibrary.un.org/record/176731>:

²⁷ Նույն մոտեցումն է ցուցաբերել նաև Եվրոպական համայնքը: 1993թ. ապրիլի 7-ի հայտարարությունում Եվրոպական համայնքը կոչ էր անում Հայաստանի կառավարությանը՝ օգտագործելու իր ազդեցությունը «Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի» նկատմամբ: European Political Cooperation Documentation Bulletin, 1993, էջ 204: 1993թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությունում Եվրոպական համայնքը հույս էր հայտնում, որ «Լեռնային Ղարաբաղի տեղական հայկական զինված ուժերը» կհարգեն ՄԱԿ ԱԽ թիվ 822 և 853 բանաձևերը և դուրս կգան Քելբաջարի, Ադդամի,

այլևս չի կիրառվել, սակայն բոլոր բանաձևերի սիստեմատիկ մեկնությունից բխում է, որ խոսքը բացառապես Լեռնային Ղարաբաղի ուժերին է վերաբերում: ՄԱԿ Անվտանգության խորհուրդը երբևէ չի արձանագրել, որ Ադրբեջանի որևէ տարածք գրավվել է Հայաստանի Հանրապետության կողմից: Ընդհակառակը, 1993թ. հուլիսի 27-ի թիվ 853 բանաձևի 9-րդ կետի համաձայն՝ «Անվտանգության խորհուրդը հորդորում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ շարունակել գործադրելու իր ազդեցությունը Ադրբեջանական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի շրջանի հայերի նկատմամբ թիվ 822 (1993) և սույն բանաձևերի իրականացումն ապահովելու և ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկներն ընդունելու ուղղությամբ»: Այն, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կարծիքով Ադրբեջանի հետ ռազմական գործողությունները վարում էին Լեռնային Ղարաբաղի գինված ուժերը, հստակորեն երևում է նաև Անվտանգության խորհրդի վերջին՝ թիվ 884 (1993) բանաձևի 2-րդ կետից, որտեղ խորհուրդը կոչ էր անում «Հայաստանի կառավարությանը օգտագործել Ադրբեջանական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի շրջանի հայերի նկատմամբ իր ազդեցությունը՝ Խորհրդի թիվ 822 (1993), 853 (1993) ու 874 (1993) բանաձևերն աներկբայորեն կատարելու ուղղությամբ և ապահովել, որպեսզի ներգրավված ուժերին չտրամադրվեն իրենց ռազմական գործողություններն ընդլայնելու միջոցներ»:

ՄԱԿ ԱԽ 1993թ. բոլոր չորս բանաձևերից ակնհայտ է, որ հակամարտող կողմերը Լեռնային Ղարաբաղի հայերը և Ադրբեջանն են, այլ ոչ թե նաև Հայաստանի Հանրապետությունը: Ռազմական գործողությունների դադարեցման բոլոր կոչերն ուղղված են Ադրբեջանին և Լեռնային Ղարաբաղի հայերին, բայց ոչ Հայաստանի Հանրապետությանը: «Օկուպացիոն ուժերի» դուրսբերման պահանջը նույնպես վերաբերում Լեռնային Ղարաբաղին: Չնայած այն հանգամանքին, որ Անվտանգության խորհուրդը Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառով արձանագրում է Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների վատթարացումը և լարվածությունը, այդուհանդերձ, Հայաստանին հասցեագրում է միայն կոչ՝ ներգործելու Արցախի հայերի վրա՝ ռազմական գործողությունները դադարեցնելու և օկուպացիոն ուժերը դուրս բերելու նպատակով:

Ադրբեջանը ի սկզբանե չի կատարել բոլոր 4 բանաձևերի ամենահիմնական պահանջը՝ կրակի դադարեցում, ռազմական և թշնամական գործողությունների դադարեցում՝ ապավինելով հակամարտության ռազմական ճանապարհով

Ֆիզուլու և Ջեբրաիլի շրջաններից (նույն տեղում, էջ 405): Հատկանշական է, որ Լաչինի շրջանից դուրս գալու մասին որևէ խոսք չկար: 1993թ. հունիս 24-ի հայտարարությունում Եվրոպական համայնքը ողջունում էր, որ հակամարտության բոլոր կողմերը համաձայնություն են տվել Ռաֆայելի պլանին, և գնահատում էր հատկապես Լ. Տեր-Պետրոսյանի ջանքերը այն բանի համար, որ ԼՂ հայերի ներկայացուցիչները համաձայնել են այդ պլանին: Նույն տեղում, էջ 345:

լուծմանը²⁸: Հենց Ադրբեջանի կողմից բանաձևերի հիմնարար պահանջները չկատարելու հետևանքով էր անհնարին դարձել բանաձևերի ամբողջական իրականացումը, ներառյալ՝ զորքերի դուրսբերումը, թեև Արցախի կողմից բանաձևերի կատարմանն ուղղված կոնկրետ քայլեր ձեռնարկվել են: Ադրբեջանը լուծում է Անվտանգության խորհրդի բանաձևերի մյուս պահանջների մասին՝ տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ բլոկադայի վերացում, որոնք Ադրբեջանի կողմից նույնպես չեն կատարվել²⁹: Ըստ Ռուսաստանի կողմից Մինսկի խմբի այդ ժամանակվա ներկայացուցիչ Վ. Կազիմիրովի՝ չկատարման արդյունքում այս բանաձևերը արժեզրկվեցին, Անվտանգության խորհուրդը իր հեղինակությունը պահպանելու համար այլևս չընդունեց որևէ նոր բանաձև: Նա նշում է, որ ելնելով այդ հանգամանքից, իրենք ստիպված էին «մտածելու նոր հիմք»³⁰, որը դարձավ 1994թ. մայիսի 11-ի զինադադարի համաձայնագիրը:

ՄԱԿ Անվտանգության խորհրդի այս բանաձևերի լույսի ներքո առավել քան տարօրինակ է, որ Արցախյան հակամարտությանը նվիրված միջազգային-իրավական գրականությունում բազմաթիվ հետազոտողներ, որոնք ապրիորի ադրբեջանամետ դիրքորոշում չունեն, հեշտությամբ ընդունում են ադրբեջանական քարոզչական այն թեզը, որ Հայաստանի Հանրապետությունն է գրավել է ադրբեջանական տարածքները: Այսպես, Թ. Ռույսը և Ֆ. Ռոդրիգես Սիլվեստրեն, որոնք համոզիչ կերպով հերքում են Ադրբեջանի «իրավունքը՝ ռազմական ճանապարհով վերականգնելու օկուպացված տարածքը», առանց այլևայլության պնդում են, որ միջազգային հանրության կողմից Հայաստանը լայնորեն դիտվում էր որպես Լեռնային Ղարաբաղի և նրա հարակից յոթ ադրբեջանական շրջանների օկուպանտ պետություն³¹: Հակառակ նրանց, ՄԱԿ Անվտանգության խորհրդի ո՛չ տեքստը և ո՛չ էլ ենթատեքստը նման եզրակացության որևէ առիթ չեն տալիս: Ինչ վերաբերում է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 2008թ. մարտի 14-ի թիվ 62/243 բանաձևին³², ապա նույնիսկ այդ անթաքույց կողմնակալ փաստաթղթի 2-րդ կետը պահանջում է «բոլոր հայկական ուժերի անհապաղ, ամբողջական և անվերապահ դուրսբերումը Ադրբեջանի Հանրապետության բոլոր օկուպացված տարածքներից»: ՄԱԿ ԳԽ 2008թ. բանաձևը իրականում ակնհայտորեն ցույց տվեց, որ Ադրբեջանի

²⁸ Անդրադառնալով ՄԱԿ ԱԽ 1993թ. բանաձևերի չկատարմանը՝ Վ. Կազիմիրովը ուղղակիորեն նշել է, որ ադրբեջանական տարածքների գրավումը «առաջացել է այն պատճառով, որ Ադրբեջանը ոչ մի կերպ չէր ցանկանում դադարեցնել ռազմական գործողությունները՝ հուսալով, որ մի փոքր էլ ավելի կսեղմի հայերին: Եվ ստացվեց ճիշտ հակառակը, ու նրանք կորցրին տարածք առ տարածք»:
<https://www.mk.ru/politics/2016/04/24/otec-mirnogo-soglasheniya-po-nagornomu-karabakhu-rasskazal-kogda-perestanut-strelyat.html>:

²⁹ <http://www.vn.kazimirov.ru/k100.htm>:

³⁰ Նույն տեղում:

³¹ Ruys, Tom and Felipe Rodríguez Silvestre, "Military Action to Recover Occupied Land: Lawful Self-defense or Prohibited Use of Force? The 2020 Nagorno-Karabakh Conflict Revisited", in: International Law Studies, 97(1), 2021, էջ 670:

³² <https://digitallibrary.un.org/record/622595>

դիրքորոշումը և նրա հավակնությունը Արցախի նկատմամբ պաշտպանվում է ՄԱԿ անդամ պետությունների չնչին փոքրամասնության կողմից: Բանաձևին դեմ քվեարկեցին ՄԱԿ ԱԽ երեք պետություններ, որոնք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետություններն են (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա), ձեռնպահ՝ ՄԱԿ ԱԽ մյուս երկու մշտական անդամները՝ Չինաստանը և Մեծ Բրիտանիան: Բանաձևի ընդունմանը կողմ է քվեարկել 39, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 100 պետություն³³:

II. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունների ճանաչումը միջազգային իրավունքում կարգավորված չէ բոլոր պետությունների համար համապարտադիր որևէ պայմանագրով: Նման պայմանագրի բացակայությունը պատահական չէ, քանի որ պետությունները չեն ցանկանում իրենց կաշկանդել հստակ նորմերով, որպեսզի հնարավորություն ունենան այդ խնդրին մոտենալ իրենց քաղաքական հայեցողությանը համապատասխան: Ճանաչումը պետության միակողմանի կամավոր ակտ է, որի միջոցով նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն հայտարարում է այն մասին, որ մյուս պետությանը դիտում է որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և մտադիր է նրա հետ պաշտոնական հարաբերություններ հաստատել:

Պետությունների կողմից որոշակի տարածքային միավորի միջազգային ճանաչումը՝ որպես այդպիսին, պետության գոյության նախապայման չէ, քանի որ ճանաչումը պետականության չափանիշների բաղկացուցիչ տարր չէ: Պետության առկայությունը կախված չէ նրա միջազգային-իրավական ճանաչումից: Այս դրույթը, մասնավորապես, հստակորեն ամրագրված է Մոնտեվիդեոյի կոնվենցիայի 3-րդ հոդվածում. «Պետության քաղաքական գոյությունը կախված չէ այլ պետությունների ճանաչումից: Նույնիսկ ճանաչումից առաջ պետությունն իրավունք ունի պաշտպանել

³³ <https://www.un.org/ru/ga/62/docs/62res3.shtml>: Սույն աշխատությունում հատուկ անդրադարձ չի կատարվում Չիրագովի գործին, ինչն առանձին ուսումնասիրության առարկա է: Case of Chiragov and others v. Armenia (Application no. 13216/05), <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22%3A%5B%5B%22001-155353%22%5D%5D%7D>: Այստեղ բավարար է միայն նշել, որ ՄԻԵԴ եզրահանգումը, ըստ որի՝ «ԼՂՀ»-ն և նրա վարչակազմը գոյատևում են Հայաստանի կողմից իրեն ցուցաբերվող ռազմական, քաղաքական, ֆինանսական և այլ աջակցության շնորհիվ, որը, հետևաբար, արդյունավետ վերահսկողություն է իրականացնում Լեռնային Ղարաբաղի և հարակից տարածքների, այդ թվում՝ Լաչինի շրջանի նկատմամբ», չի կարող որևէ կերպ կասկածի տակ դնել Արցախի պետականությունը, քանի որ ՄԻԵԴ որոշումը հիմնված է Հայաստանի Հանրապետության և Ղարաբաղի միջև փաստացի հարաբերությունների աղավաղված և չփաստված արձանագրման և գնահատականի վրա, ինչը բացառում է ճիշտ իրավական եզրահանգումը: Դատարանի որոշումը հակասում է նաև տրամաբանության տարրական կանոններին, քանի որ ռազմական, քաղաքական, ֆինանսական և այլ աջակցությունից անհրաժեշտաբար չի բխում, որ աջակցություն ցուցաբերող արդյունավետ վերահսկողություն ունենա այլ սուբյեկտի իրավագործության ներքո գտնվող որևէ տարածքի նկատմամբ:

իր ամբողջականությունը և անկախությունը, որպեսզի ապահովի իր զարգացումը և հետևաբար իրավունք ունի գործել այնպես, ինչպես հարկ է համարում. ընդունել օրենքներ իր շահերի հիման վրա, կառավարել իր ծառայությունները և սահմանել իր դատարանների իրավազորությունը և լիազորությունները: Այս իրավունքների իրականացումը չունի այլ սահմանափակում, քան միջազգային իրավունքի համաձայն՝ այլ պետությունների իրավունքների իրականացումը»:

Ճանաչման նման ըմբռնումը համապատասխանում է ինչպես պետությունների պրակտիկային, այնպես էլ միջազգային իրավունքի դոկտրինում գերիշխող դեկլարատիվ տեսությանը³⁴ ըստ որի ճանաչումը միայն արձանագրում է նոր պետության երևան գալը: Ճանաչումը նոր սուբյեկտ առաջացնող իրավաբանական ակտ չէ, քանի որ ընդամենը պաշտոնապես ի գիտություն է ընդունում միջազգային իրավունքի նոր սուբյեկտի գոյությունը:

Դեկլարատիվ տեսությունը պետությունների պրակտիկայում հաստատվում է պայմանագրային կարգավորումներով, պետությունների հայտարարություններով, ինչպես նաև տարբեր դատական նախադեպերով³⁵: Բադինտերի հանձնաժողովը այս առումով կատեգորիկ կերպով փաստում է, որ «...այլ պետությունների կողմից ճանաչման հետևանքները զուտ դեկլարատիվ են»³⁶:

Ի հակադրություն ճանաչման դեկլարատիվ տեսության՝ կոնստիտուտիվ տեսության կողմնակիցները պնդում են, որ յուրաքանչյուր նոր պետություն միջազգային իրավունքի որակ է ձեռք բերում գոյություն ունեցող պետություններից ճանաչում ստանալու շնորհիվ³⁷: Ճանաչման կոնստիտուտիվ տեսությունը ներկայումս ունի շատ փոքր թվով կողմնակիցներ:

Ինչպես իրավամբ նշում է գերմանացի հանրաճանաչ իրավագետ Յոխեն Աբրահամ Ֆրովայնը, «միջազգային իրավունքում ճանաչման իրավական հասկացության ձեռք բերած կարևորությունը պայմանավորված է վերջինիս անկատար բնույթով»: Եթե ազգային իրավակարգերում որևէ իրավական վեճ ի վերջո լուծվում է դատարանների միջոցով, ապա միջազգային իրավունքում վեճերի լուծումը դատական կարգով շատ տարածված երևույթ չէ: Որպես միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտներ՝ հենց պետություններն են որոշում են, թե արդյո՞ք այս կամ այն կանոնի կիրառման համար անհրաժեշտ պահանջներն առկա

³⁴ Pellet, նշվ. աշխ., էջ 182:

³⁵ Stefan Talmon, Kollektive Nichtanerkennung illegaler Staaten, Tübingen 2006, էջ 216:

³⁶ Pellet, նշվ. աշխ., էջ 182:

³⁷ Կոնստիտուտիվ տեսության հին սերդի նշանավոր ներկայացուցիչներից են Գ. Շվարցենբերգերը, Հ. Քելզենը, Դ. Անցիլոտտին, Ֆ. Ջենսինգսը, արդի հետազոտողներից՝ Բ. Հիլգրուբերը: Հ. Լաութերփախտի դիրքորոշումը միջանկյալ է՝ եթե պետականության հատկանիշներն առկա են, ապա, ըստ նրա, կա նոր պետությունը ճանաչելու պարտականություն: Hersch Lauterpacht, Recognition in International Law, Cambridge 1947, էջ 32-33, 73-75:

են, թե՛ ոչ: «Նոր պետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի գոյացումը երկար ժամանակ վճռորոշ նշանակություն ուներ միջազգային իրավունքի կանոնների կիրառման համար: Պետությունների՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտների պաշտոնական ճանաչումը պետք է դիտարկել այդ ֆոնի վրա»³⁸: Պետության միջազգային-իրավական սուբյեկտայնությունը, նրա իրավունքները և պարտականությունները կախված են բացառապես միջազգային իրավունքով նախատեսված պետականության չափանիշների կատարումից: Այն փաստը, որ այդ չափանիշների կատարումը, որպես կանոն, վիճելի է, դեռևս չի նշանակում, որ բոլոր պետությունները հավասարապես իրավացի են, և որ կոնստիտուտիվ տեսության համաձայն՝ պետք է հիմնվել առանձին-առանձին վերցրած պետությունների տեսակետի վրա: Այս իրավիճակը արդի միջազգային իրավունքի ընդհանուր խնդիրն է, քանի որ գոյություն չունի որևէ կենտրոնական իշխանություն, որն իրավասու է պարտավորեցնող որոշումներ կայացնել պետականության չափանիշների առկայության վերաբերյալ:

Պետականության չափանիշների օբյեկտիվ առկայությունը իր հերթին չի պարտադրում գոյություն ունեցող պետություններին՝ ճանաչելու նոր պետությանը: Ինչպես ժամանակին նշել է Յ. Բրաունլին, «ճանաչումը, որպես պետության հրապարակային ակտ, կամավոր և քաղաքական ակտ է, և այս առումով իրավական պարտականություն չկա»³⁹: Մյուս կողմից՝ միջազգային իրավունքում պետությունների ճանաչման համար կան նաև իրավական խոչընդոտներ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է միջազգային իրավունքի համապարտադիր նորմերի խախտմամբ ստեղծված պետությունների ճանաչման մասին: Քանի որ, ըստ ՄԱԿ-ի բանաձևերի, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը ստեղծվել է 1974 թվականին Թուրքիայի կողմից Կիպրոսի Հանրապետություն ներխուժման և այդ պետության հյուսիսային մասի օկուպացման արդյունքում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 541 (1983) և 550 (1984) բանաձևերը պահանջում են համաշխարհային հանրության բոլոր անդամներից «Կիպրոսի Հանրապետությունից բացի չճանաչել Կիպրոսի որևէ այլ պետություն»⁴⁰: Պետության ճանաչման նման արգելքը նպատակ է հետապնդում դրդել տվյալ պետությանը ինքնալուծարվել և վերադառնալ նախկին ստատուս քվոյին:

Պետություն ճանաչման արգելքը և քաղաքական դրդապատճառներով պետության չճանաչումը լիովին տարբեր երևույթներ են: Առաջին դեպքում մերժվում է կազմավորման իրավական կարգավիճակը՝ որպես պետություն, այսինքն՝

³⁸ Jochen Abr. Frowein, "Recognition", in: Max Planck Encyclopedia of Public International Law, Oxford University Press, Vol. 8, 2012, էջ 656:

³⁹ Jan Brownlie, "Recognition in Theory and Practice", in: British Yearbook of International Law, Volume 52 (1982), էջ 197:

⁴⁰ <https://digitallibrary.un.org/record/58970>, <https://digitallibrary.un.org/record/67600>:

պետականությանը բնորոշ բոլոր իրավունքները, իսկ երկրորդ դեպքում նոր պետությունը ֆիկցիայի միջոցով դիտվում է որպես մայր պետության մաս: Արցախի պարագայում ակնհայտ է, որ այլ պետությունների կողմից Արցախի Հանրապետության չճանաչումը պայմանավորված է քաղաքական դրդապատճառներով, այլ ոչ թե, ինչպես Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության պարագայում՝ միջազգային իրավունքին հակասելու պատճառով:

Արցախի վերջնական կարգավիճակի վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ բանակցային ամբողջ գործընթացի ընթացքում, հատկապես 2007թ. նոյեմբերին Մադրիդյան սկզբունքների ընդունումից հետո, վկայում են այն մասին, որ մեծ տերությունների կողմից Արցախի չճանաչման հիմնական պատճառը հակամարտող կողմերի միջև փոխադարձաբար ընդունելի լուծումներ գտնելու ձգտումն է: Ընդ որում, ի տարբերություն հետխորհրդային տարածքում գոյություն ունեցող մնացած բոլոր հակամարտությունների, ԱԽ անդամ երեք մեծ տերությունները Արցախյան հակամարտության լուծման համար իրենց առաջարկություններում ճանաչել են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը անջատման միջոցով: Մադրիդյան սկզբունքների ներկայացումից հետո (29 նոյեմբերի 2007թ.)՝ ընդհուպ մինչև 2019թ. հունիսը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկությունները մշտապես նախատեսել են, որ Արցախի վերջնական կարգավիճակի հարցը պետք է որոշվի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտմամբ՝ համաժողովրդական քվեարկության միջոցով: Ըստ ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուս համանախագահ Իգոր Պոպովի (13 հունվարի 2021թ.), 2019թ. հունիսի առաջարկությունը նախատեսում էր «Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումը կողմերի կողմից համաձայնեցված ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո՝ համաժողովրդական քվեարկության անցկացման միջոցով, որն արտահայտում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և ունի իրավաբանորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան»⁴¹: Նկատի ունենալով, որ միջազգային իրավունքի գերակշռող դոկտրինը ժողովուրդների ինքնորոշման սկզբունքից չի

⁴¹ <https://www.aravot.am/2023/03/16/1329119>: Հարկ է նկատել, որ նաև 44-օրյա պատերազմից հետո՝ ընդհուպ մինչև 2021թ. մայիսը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունները շեշտել են «կողմերին քաջաձանոթ տարրերի և սկզբունքների հիման վրա վերջնական համապարփակ և կայուն կարգավորման» ձեռքբերման անհրաժեշտությունը: <https://www.osce.org/minsk-group/483416>: <https://www.osce.org/minsk-group/485558>: Մանրամասն տե՛ս «ԼՈՒՅՍ», 44-օրյա պատերազմից հետո ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հայտարարությունների բովանդակային վերլուծություն. ինչո՞ւ անհետացան հիմնարար սկզբունքները և ի՞նչ ենք հասկանում՝ «կարգավիճակ» ասելով. <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=257>:

բխեցնում մայր պետությունից անջատվելու միանշանակ իրավունք, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկությունները բացառիկ երևույթ են արդի միջազգային հարաբերություններում: Բացի դա, այդ առաջարկությունները նախատեսել են, որ հակամարտության վերջնական կարգավորման փաստաթուղթը Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների կողմից պետք է մշակվի «Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ համատեղ»:

Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ պետության գոյությունը չի պայմանավորվում նրա ճանաչմամբ, իսկ պետության չճանաչումը չի նշանակում, որ իրեն պետություն դիտող կազմավորումները չունեն որևէ միջազգային-իրավական կարգավիճակ: Պետությունների պրակտիկան ցույց է տալիս, որ այն կազմավորումները, որոնք իրականում տևական ժամանակով որոշակի տարածքում իշխանություն են իրականացնում, դիտարկվում են առնվազն որպես միջազգային իրավունքի մասնակի սուբյեկտներ: Այն կազմավորումների վերաբերյալ, որոնք իրենց դիտարկում են որպես պետություններ, սակայն միջազգայնորեն ճանաչված չեն, Յ. Ֆրովայնը հիմնել է «կայունացած դե ֆակտո ռեժիմների» տեսությունը, որով նման պետությունների որակման համար որոշիչ է համարում երկու չափանիշ. առաջին՝ ռեժիմի ինքնիշխանության արդյունավետությունը (effectiveness) և երկրորդ՝ դրա առնվազն սահմանափակ ներգրավումը միջազգային հարաբերություններում⁴²: Դե ֆակտո ռեժիմի դոկտրինը, որը լայն ճանաչում ունի գերմանական գրականությունում, սկզբունքորեն անհրաժեշտ չէ փաստացի գոյություն ունեցող պետությունների իրավական կարգավիճակը հիմնավորելու տեսանկյունից: Այսպես կոչված՝ դե ֆակտո ռեժիմները իրականում միջազգային իրավունքի իմաստով պետություններ են, որոնք պարզապես քաղաքական դրդապատճառներով չեն ճանաչվում⁴³: Դե ֆակտո ռեժիմի իրավական կարգավիճակը համապատասխանում է պետության կարգավիճակին, այսինքն՝ այն ipso jure ունի պետության պարտադիր (նվազագույն) իրավունքներն ու պարտականությունները: Այն փաստը, որ այս պետական կազմավորումները, ի թիվս այլոց, կաշկանդված և պաշտպանված են ուժի կիրառման արգելքով, և որ նրանց նկատմամբ կիրառվում է դեֆիկտային իրավունքը, բխում է ոչ թե նրանց դե ֆակտո ռեժիմի դիրքից, այլ իրենց՝ որպես պետության դիրքից⁴⁴:

Ինչպես նշում է Զ. Քրաուֆորդը, պետությունների ճանաչման իրավական հետևանքների որոշման հարցում սկզբունքային լուծում պետք է տրվի այն հարցին, թե արդյո՞ք պետականության չափանիշներին բավարարող կազմավորման մերժումը որպես պետություն, այդ պետության չճանաչումը իրավունք է տալիս

⁴² Frowein, Das de facto-Regime im Völkerrecht, Köln/Berlin 1968; էջ 35, 68, Frowein, "De Facto Regime", in: Max Planck Encyclopedia of Public International Law, Oxford University Press, Vol. 2, 2012, էջ 1052-1055:

⁴³ Talmon, նշվ. աշխ., էջ 216:

⁴⁴ Նշվ. աշխ., էջ 216-217:

չճանաչող պետությանը վարվել այդ կազմավորման հետ այնպես, կարծես թե նա պետություն չէ. անտեսել նրա քաղաքացիությունը, միջամտել նրա գործերին, ընդհանրապես մերժել նրա միջազգային իրավունքով նախատեսված իրավունքները: Քրաուֆորդն այս հարցին վճռականորեն տալիս է բացասական պատասխան և ընդգծում, որ ճանաչման վերաբերյալ կոնստիտուտիվ դիրքորոշումն անընդունելի է⁴⁵:

Այնքանով, որքանով չճանաչված պետությունների իրավական կարգավիճակը տարբերվում է ճանաչված պետությունների կարգավիճակից, այդ տարբերությունները վերաբերում են կամընտիր հարաբերությունների շրջանակին, որը թողնված է պետությունների հայեցողությանը: Խոսքն առաջին հերթին պայմանագրային հարաբերությունների (դիվանագիտական, հյուպատոսական, տնտեսական, առևտրային և այլն), ինչպես նաև միջազգային կազմակերպություններին անդամակցության մասին է:

III. ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Պետություններն իրենց գոյության ուժով միջազգային իրավունքի սուբյեկտներ են և ունեն համապարփակ իրավունակություն և գործունակություն: Ունակությունը, սակայն, դեռ չի նշանակում այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավունք, քանի որ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի միջազգային իրավունքի մյուս սուբյեկտը պատրաստ լինի տվյալ պետության հետ իրավահարաբերությունների մեջ մտնելուն: Պետության որակ, պետության կարգավիճակ ունենալը նշանակում է միայն, որ տվյալ պետությունն ունի որոշակի նվազագույն իրավունքներ, որոնք կարելի է անվանել պետության պարտադիր իրավունքներ, այսինքն՝ այնպիսի իրավունքներ, որոնց գոյությունը կախված չէ այլ պետությունների կամքից: Այդ իրավունքների թիվը բավական սահմանափակ է և հստակ սահմանված չէ⁴⁶: Միջազգային իրավունքի դոկտրինում, սակայն ընդունված է, որ այդ իրավունքների շրջանակն անվիճելիորեն ներառում է տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության անօտարելի իրավունքը, ինչպես նաև զինված հարձակումներից անհատական և հավաքական ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը:

1. Ուժի սպառնալիքի կամ կիրառման արգելքը

ՄԱԿ Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է ուժի սպառնալիքի կամ կիրառման արգելքը, համաձայն որի «Միավորված ազգերի

⁴⁵ Crawford, նշվ. աշխ., էջ 27:

⁴⁶ Hans Martin Blix, Contemporary Aspects of Recognition, Collected Courses of the Hague Academy of International Law, RdC 130 (1970-11), էջ 625: José Maria Ruda, States, "Fundamental Rights and Duties", in: Rudolf Bernhardt (ed.), Encyclopedia of Public International Law, Vol. 4, Amsterdam 2000, էջ 673-682:

կազմակերպության բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի սպառնալիքից կամ դրա կիրառումից»:

Ըստ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի՝ ուժի կիրառման ընդհանուր արգելքը գործում է ոչ միայն ՄԱԿ-ի Կանոնադրության ուժով՝ որպես պայմանագրային իրավունքի դրույթ, այլ համընդհանուր ճանաչում ունի՝ որպես միջազգային սովորության իրավունքի նորմ⁴⁷: Որպես միջազգային սովորության իրավունքի համընդհանուր գործողություն ունեցող նորմ (erga omnes), ուժի կիրառման ընդհանուր արգելքը պաշտպանում և կաշկանդում է նաև այն պետություններին, որոնք ՄԱԿ-ի անդամ չեն: Այն ius cogens-ի որակ ունի⁴⁸:

Ուժի սպառնալիքի կամ կիրառման արգելքը կոնկրետացված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1970թ. հոկտեմբերի 24-ին ընդունված Խաղաղ հարաբերությունների հռչակագրի (Friendly Relations Declaration) առաջին սկզբունքում: Ըստ այդ սկզբունքի 4-րդ մասի՝ «յուրաքանչյուր պետություն պարտավորություն ունի ձեռնպահ մնալ ուժի սպառնալիքից կամ դրա կիրառումից՝ խախտելու միջազգային դեմարկացիոն գծերը, ինչպիսին են զինադադարի գծերը, որոնք հաստատվել են միջազգային պայմանագրով կամ դրան համապատասխան, որին կողմ է այդ պետությունը, կամ որը այդ պետությունը պարտավոր է հարգել ցանկացած այլ հիմքով»⁴⁹:

Ուժի սպառնալիքի կամ կիրառման արգելքը տարածվում է նաև բոլոր de facto պետությունների նկատմամբ՝ անկախ դրանց միջազգային իրավական ճանաչումից և ներառում է այդ պետությունների տարածքային սահմանները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3314 (XXIX) բանաձևով հաստատված ագրեսիայի բնորոշման (հոդված 1) բացատրական նշումների (explanatory notes) համաձայն «պետություն» հասկացությունը կիրառվում է «անկախ ճանաչման հարցից կամ նրանից, թե արդյո՞ք պետությունը ՄԱԿ-ի անդամ է»⁵⁰:

⁴⁷ ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի որոշումներ. Case Concerning the Military and Paramilitary Activities in and Against Nicaragua“(Nicaragua v. United States of America, 27.6.1986), ICJ-Reports 1986, էջ 14, կետ 176, Islamic Republic of Iran v. United States of America, 6.11.2003, ICJ-Reports 2003, էջ 161, կետ 51:

⁴⁸ Oliver Dörr, "Use of Force", in: Max Planck Encyclopedia of Public International Law, Oxford University Press, Vol. 10, 2012, էջ 607, Albrecht Randelzhofer, Art.2(4), in: Bruno Simma (ed.) The Charter of the United Nations, 2. Ed., Oxford 2002, էջ 112-136 (կետ 28):

⁴⁹ Declaration on Principles of International Law Concerning Friendly Relations and Co-operation among States in Accordance with the Charter of the United Nations, GA Res 225, 25 UN GAOR (18 8 3rd mtg), UN Doc A/8082 (1970) principle 1: Ընդգծ. մերն է:

⁵⁰ GA Res. 3314 (XXIX), Definition of Aggression <https://digitallibrary.un.org/record/190983>: Frowein, De Facto Regime, էջ 1053:

2. 1994թ. զինադադարի բնույթը և իրավական հետևանքները

Ղարաբաղյան առաջին պատերազմը ավարտվեց 1994թ. մայիսի 9-11-ին Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև ստորագրված եռակողմ զինադադարով: Երբ 1993թ. դեկտեմբերին ադրբեջանական կողմի սկսած լայնածավալ հարձակումները 1994թ. ձմռանը ամբողջությամբ ձախողվեցին, ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի նախաձեռնությամբ 1994 թվականի փետրվարի 18-ին Մոսկվայում բանակցություններ տեղի ունեցան Հայաստանի, Ադրբեջանի պաշտպանության նախարարների և ԼՂՀ պաշտպանության բանակի լիազոր ներկայացուցչի միջև: Դրանց ավարտին ստորագրվեց արձանագրություն, որը նախատեսում էր նույն թվականի մարտի 1-ից զինադադարի ռեժիմ և հակամարտող կողմերի միջև բուֆերային գոտու ստեղծում: Հակամարտող կողմերը պետք է հետ քաշեին իրենց զորքերը այնպիսի տարածության վրա, որը անմատչելի կլիներ հակառակորդ կողմի հրետանու համար: Զինադադարի ռեժիմի պահպանումը վերահսկելու համար արձանագրությունը նախատեսում էր ստեղծել խառը շարժական խմբեր՝ հակամարտող երեք կողմերի (ՀՀ, ԱՀ և ԼՂՀ) և Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Բացի այդ, այս փաստաթուղթը, առանց կոնկրետ ժամկետների սահմանման, ներառում էր գրավված տարածքներից զորքերի դուրսբերման մասին դրույթ, ինչը ենթադրում էր արձանագրության կետերի փուլային կատարում: Արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին իրավունք էր տրվում զինադադարի խախտման դեպքում ձեռնարկել ցանկացած, ներառյալ ռազմական միջոցներ՝ ապահովելու արձանագրության դրույթների կատարումը⁵¹: 1994 թվականի փետրվարի 18-ի արձանագրությունը, սակայն, մնացած թղթի վրա, քանի որ ադրբեջանական կողմը հրաժարվեց այն կատարելուց⁵²:

1994թ. ապրիլի 15-ին Մոսկվայում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհուրդը Ռուսաստանի նախաձեռնությամբ հայտարարություն ընդունեց Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ հակամարտության վերաբերյալ՝ հստակորեն ձևակերպելով ղարաբաղյան կարգավորման հրատապ անհրաժեշտությունը: Այդ ժամանակ Ղարաբաղի վերաբերյալ բարձրագույն մակարդակով ընդունված նմանատիպ փաստաթուղթ գոյություն չուներ, ընդ որում՝ այդքան բազմակողմանի և Ադրբեջանի ու Հայաստանի նախագահների ուղղակի մասնակցությամբ: Ընդգծելով փոխզիջումային լուծմանը նպաստելու խորհրդի հաստատակամությունը, փաստաթղթում նշվում էր, որ «հիմնական առաջնահերթությունը, կարգավորման հրամայականը կրակի և բոլոր ռազմական գործողությունների անհապաղ

⁵¹ Արձանագրության տեքստը հրապարակված չէ: Փաստաթղթի մասին տե՛ս Տիգրան Բալայան, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ. Երևան, 2004, էջ 116-117:

⁵² Казимиров, նշվ. աշխ., էջ 284, 418:

դադարեցումն է և դրանից հետո դրա հուսալի ամրապնդումը: Առանց դրա անհնար է անցնել ողբերգական դիմակայության հետևանքների վերացմանը»⁵³: Հայտարարությունը, այսպիսով, նախանշում էր հակամարտության կարգավորման ամենահրատապ պահանջների «եռյակը»՝ կրակի անհապաղ դադարեցում, բոլոր ռազմական գործողությունների դադարեցում և զինադադարի հուսալի ամրագրում:

ԱՊՀ ղեկավարների այս հայտարարությունն իր զարգացումը ստացավ 1994 թվականի մայիսին Բիշքեկում անցկացված ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի հանդիպման շրջանակներում: Ռուսաստանի միջնորդական ակտիվ ջանքերի շնորհիվ 1994 թվականի մայիսի 5-ին Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների միջև համաձայնություն ձեռք բերվեց Բիշքեկի արձանագրության վերաբերյալ⁵⁴: Արձանագրությունում կոչ էր արվում «բոլոր հակամարտող կողմերին լսել ողջախոհության ծայնը. մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնել կրակը՝ հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի արձանագրության վրա (այդ թվում՝ նաև դիտորդների տեղակայման մասով), և արդյունավետ աշխատանքով սեղմ օրերի ընթացքում այն ամրապնդել հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման միջոցով, որը նախատեսում է ռազմական և թշնամական գործողությունները չվերսկսելու ապահովման մեխանիզմ, գրավված տարածքներից զորքերի դուրսբերում և հաղորդակցման ուղիների գործունեության վերականգնում, փախստականների վերադարձ»:

Բիշքեկի արձանագրությունը քաղաքական կարևոր փաստաթուղթ էր, որի ընդունումը ճանապարհ բացեց զինադադարի պայմանագրի կնքման համար⁵⁵: Այն հակամարտող կողմերի ներկայացուցիչների կողմից ստորագրվեց առանձին-առանձին՝ համապատասխանաբար Բաքվում, Երևանում և Ստեփանակերտում, 1994թ. մայիսի 9-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովի, մայիսի 10-ին՝ Հայաստանի պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի և մայիսի 11-ին՝ Լեռնային Ղարաբաղի Զորքերի հրամանատար Ս. Բաբայանի կողմից:

⁵³ Нагорный Карабах в международном праве и мировой политике: Документы и комментарии. Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. Ю.Г. Барсегов. Москва 2008, էջ 744:

⁵⁴ Ադրբեջանի Միլլի մեջլիսի փոխնախագահ Ա. Ջալիլովը, որը գլխավորում էր ադրբեջանական պատվիրակությունը Բիշքեկում, այդ օրը չստորագրեց արձանագրությունը: Այն 1994թ. մայիսի 9-ին Բաքվում ստորագրել է Միլլի մեջլիսի նախագահ Ռ. Գուլիևը՝ Հ. Ալիևի ցուցումով: Ինչպես հետագայում բացահայտել է Հ. Ալիևը, ինքը Ա. Ջալիլովին հանձնարարել էր Բիշքեկում որևէ փաստաթուղթ չստորագրել: Բիշքեկի արձանագրությանը Ադրբեջանը վերջնական համաձայնություն տվեց միայն 1994թ. մայիսի 8-ին, Բաքվում, Վ. Կազիմիրովի և Հ. Ալիևի միջև քննարկումների արդյունքում: Տե՛ս Kazimirov, նշվ. աշխ., էջ 245-246: Հայաստանի կողմից Բիշքեկի արձանագրությունը ստորագրել է ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքյանը, իսկ Արցախի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը:

⁵⁵ Բիշքեկի արձանագրությունը շատ հաճախ սխալմամբ ներկայացվում է որպես զինադադարի համաձայնագիր: Իրականում այն միայն զինադադար հաստատելու կոչ էր և իրավաբանական պարտադիր ուժ չունեւր:

Ջինադադարի պայմանագրով Ադրբեջանը ընդունեց, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է⁵⁶: «Արձագանքելով Բիշքեկում 1994թ. մայիսի 5-ին կնքված արձանագրության մեջ շարադրված կրակը դադարեցնելու մասին կոչին և հիմք ընդունելով 1994թ. փետրվարի 18-ի արձանագրությունը»՝ 1994 թ. մայիսի 9-11-ի զինադադարի համաձայնագիրը⁵⁷ նախատեսում էր, որ նույն թվականի մայիսի 12-ից հակամարտող կողմերը պարտավորվում են «ամբողջությամբ դադարեցնել կրակը և ռազմական գործողությունները» 1994թ. մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից:

Համաձայնագրի 2-րդ կետով կողմերը խնդրում էին «ՌԴ պաշտպանության նախարարին՝ մայիսի 12-ից ոչ ուշ հրատապ խորհրդակցություն հրավիրել Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարների ու ԼՂ բանակի հրամանատարի միջև՝ նպատակ ունենալով համաձայնեցնելու զորքերի բաժանարար գծերը, այլ հրատապ ռազմատեխնիկական հարցեր, ինչպես նաև նախապատրաստել միջազգային դիտորդների առաջավոր խմբի տեղակայումը»: 3-րդ կետի համաձայն՝ այդ պայմանավորվածությունը պետք է օգտագործվեր բանակցությունները 10 օրվա ընթացքում ավարտելու և մայիսի 22-ից ոչ ուշ զինված հակամարտությունը դադարեցնելու մասին համաձայնագիր կնքելու համար:

Երբ պայմանագրով նախատեսված ժամկետում (մինչև 1994թ. մայիսի 22-ը) հնարավոր չեղավ կնքել դրանով նախատեսված՝ զինված հակամարտությունը դադարեցնելու վերաբերյալ համաձայնագիրը, 1994թ. հուլիսի 26-27-ին հակամարտող երեք կողմերը (Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ և Հայաստան) իրենց վրա պարտավորություն վերցրին «հաստատելու պայմանավորված ժամկետում կրակի դադարեցման վերաբերյալ ստանձնած պարտավորությունները և պահպանել կրակի դադարեցման ռեժիմը՝ ընդհուպ մինչև քաղաքական մեծ Պայմանագրի կնքումը, որը նախատեսում է ռազմական գործողությունների ամբողջական դադարեցումը»⁵⁸ (ընդգծումը հեղինակինն է): Ռուսաստանի

⁵⁶ 1994թ. մայիսի 9-11-ի զինադադարը ռուսական կողմից նախատեսված էր սկզբում միայն Արցախի և Ադրբեջանի միջև, իսկ Ալիևի փորձում էր այն կնքել միայն Ադրբեջանի և Հայաստանի միջև՝ առանց Արցախի: Ալիևի խնդրանքով Կազիմիրովը դիմում է Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, որը, ի զարմանս Կազիմիրովի, համաձայնում է, սակայն պնդում է, որ համաձայնության կողմ պետք է լինի նաև Լեռնային Ղարաբաղը: Տե՛ս Казимиров, նշվ. աշխ., էջ 160: Տե՛ս նաև «Հրադադարի պայմանագիրը պետք է կնքվեր Ադրբեջանի և ԼՂ-ի միջև. Հեյդար Ալիևն ինձ դիմեց, որպեսզի կապ հաստատեմ նաև Երևանի հետ» <https://168.am/2019/05/07/1118660.html>:

⁵⁷ <http://vn.kazimirov.ru/doc10.htm>

⁵⁸ Տեքստն առաջին անգամ հրապարակել է 2016թ. "Московский Комсомолец" թերթում Վ.

Կազիմիրովի հետ հարցազրույցում: <https://www.mk.ru/politics/2016/04/24/otec-mirnogo-soglasheniya-po-nagornomu-karabakhu-rasskazal-kogda-perestanut-strelyat.html>: Ըստ Ժ. Լիպարիտյանի՝ այդ փաստաթղթի կնքումը իրականացվել է առանց միջնորդների: Տե՛ս <https://hetq.am/hy/article/67967>, «Փոքր, սակայն անհրաժեշտ ճշտում՝ հրադադարի վերաբերյալ»: Անհրաժեշտ է սակայն նկատել, որ ստորագրված փաստաթուղթը հղում էր 1994թ. հունիսի 23-ի Ռուսաստանի Դաշնության նախագահի լիազոր ներկայացուցչի և ԵԱՀԽ-ի Մինսկի համաժողովի նախագահի կոչին: Վ. Կազիմիրովը 2016թ. հուլիսի 26-27-ի փաստաթղթի ծագումը բացատրում է նրանով, որ 1994թ. հուլիսին իր Երևան այցելության

պաշտպանության և արտաքին գործերի նախարարներին, Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ ԵԱՀԽ Մինսկի համաժողովի նախագահ Յ. Էլիասսոնին և Վ. Կազիմիրովին ուղղված փաստաթղթում հակամարտող կողմերը հաստատում էին «իրենց ամուր վճռականությունը՝ շարունակելու իրենց պարտավորությունների կատարումը կրակի դադարեցման վերաբերյալ, մասնավորապես՝ նկատի ունենալով պայմաններ ստեղծելու Մեծ քաղաքական համաձայնագրի ստորագրման և հակամարտության գոտում միջազգային դիտորդների տեղակայման համար»։ Հետագայում կողմերն իրենց դիրքորոշումը վերահաստատել են 1994 թվականի օգոստոսի 28-29-ին և նոյեմբերի 12-ին՝ հանդես գալով հատուկ հայտարարություններով⁵⁹։

Ի զարգացումն 1994թ. համաձայնագրերի՝ 1995թ. փետրվարի 4-ին պայմանավորվող երեք հակամարտող կողմերը (Ադրբեջան, Լեոնային Ղարաբաղ և Հայաստան) «խաղաղ գործընթացի առաջխաղացման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով» կնքեցին Լեոնային Ղարաբաղի հակամարտությունում կրակի դադարեցման ամրապնդման վերաբերյալ համաձայնագիր⁶⁰։ Այդ փաստաթուղթը, որի անհրաժեշտությունն արձանագրվել էր ԵԱՀԿ Բուդապեշտի 1994թ. դեկտեմբերի գագաթնաժողովի կողմից՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ փաստաթղթի 3-րդ կետում⁶¹, իրենից ներկայացնում էր ԵԱՀԿ Մինսկի համաժողովի համանախագահության առաջարկ, որին հակամարտող երեք կողմերը համաձայնություն տվեցին 1995թ. փետրվարի 4-ին։ Համաձայնագիրը նպատակ էր հետապնդում «ստեղծելու խաղաղ գործընթացն առաջ մղելու համար ավելի բարենպաստ պայմաններ»։ Համաձայնագիրը նախատեսում էր զինադադարի գծում միջադեպերը պարզելու և հարթելու ճգնաժամային կառուցակարգեր։ Կողմերը պարտավորվում էին զինադադարի ռեժիմը «ամրապնդելու» նպատակով ձեռնարկել մի շարք միջոցառումներ, երբ առաջանում էին կրակի դադարեցումը վտանգող միջադեպեր։ Մասնավորապես, նման դեպքերում կողմերը պարտավորվում էին անհապաղ տեղեկատվություն փոխանակել կոնկրետ միջադեպի վերաբերյալ, ստուգել փաստերը և միմյանց պատասխան տալ միջադեպի վերաբերյալ ծանուցումից հետո ամենաուշը 6 ժամվա

Ժամանակ զինադադարի երկարացման հարց է բարձրացրել Լ. Տեր-Պետրոսյանը՝ Մինսկի խմբի նախագահ Յան Էլիասսոնի առաջարկության հիման վրա։ Կազիմիրովը պատասխանել է, որ զինադադարը «լռելայն» ստորագրվել է անժամկետ, և եթե ժամկետ չի նշվում, ապա պայմանագիրն անժամկետ է։ Դրա հետ համաձայն է եղել նաև Հեյդար Ալիևը։ Կազիմիրովը ներկայացնում է հակաառաջարկ, որպեսզի բոլոր երեք հակամարտող կողմերը՝ Ադրբեջանի, Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի ականավոր ներկայացուցիչները պարբերաբար հաստատեն զինադադարը և իրենց պարտավորություններին հավատարիմ մնալու մտադրությունը մինչև զինված հակամարտության ամբողջական դադարեցման համար մեծ քաղաքական համաձայնագրի կնքումը։

⁵⁹ Մ. Մայիլյան. <http://www.nkr.am/hy/news/2019-05-29/Article-by-Masis-Mayilian>:

⁶⁰ www.vn.kazimirov.ru/doc12.htm:

⁶¹ <https://www.osce.org/files/f/documents/5/1/39554.pdf>, էջ 5-6:

ընթացքում (1-ին և 2-րդ կետեր): Չսպասելով միջադեպի հետաքննության ավարտին՝ կողմերը պարտավորվում էին միջոցներ ձեռնարկել՝ կանխելու էսկալացիան և վերականգնելու ստատուս քվոն՝ հնարավորության սահմաններում հաշվի առնելով ԵԱՀԿ Մինսկի համաժողովի համանախագահների հնարավոր առաջարկությունները (8-րդ կետ): Համաձայնագրի 10-րդ կետով կողմերը պարտավորվում էին զերծ մնալ հրապարակային հայտարարություններից, որոնք կարող էին հանգեցնել հակամարտության սրմանը:

Միջազգային իրավունքի դոկտրինում տարբերակվում է մի կողմից՝ ռազմական գործողությունների կասեցումը, մյուս կողմից՝ դադարեցումը: Մինչև համաշխարհային երկու պատերազմները զինադադարը (armistice) դիտվում էր որպես ռազմական գործողությունների կասեցման ժամանակավոր միջոց: Նման ըմբռնումն իր արտացոլումն է գտել Հաագայի 1907թ. հոկտեմբերի 18-ի Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին կոնվենցիայում: Մինչդեռ ժամանակակից միջազգային իրավունքում զինադադարի պայմանագրերի էությունը անցյալ դարի ընթացքում ենթարկվել է արմատական փոփոխությունների: Ա. Դինստայնը իր մի շարք աշխատություններում այդ փոփոխությունների իմաստը տեսնում է նրանում, որ ժամանակակից զինադադարի պայմանագրերը կողմերին զրկում են ռազմական գործողությունների վերսկսման իրավունքից, այսինքն՝ դրանք, ըստ էության, ռազմական գործողությունների դադարեցման պայմանագրեր են: Ի տարբերություն զինադադարի՝ հրադադարը (ceasefire), անկախ դրա մասնակի կամ ընդհանուր բնույթից, ըստ Դինստայնի, միայն կասեցնում է ռազմական գործողությունները և թույլ է տալիս պատերազմող կողմերին վերսկսելու ռազմական գործողությունները: Դինստայնը, սակայն, պարզունակ բացատրություն է տալիս, թե ինչպես տարանջատել միմյանցից armistice -ը և ceasefire-ը, երբ դրանց բովանդակությունը նման է: Ըստ նրա՝ այդ հարցի պատասխանը համաձայնության տեքստում համապատասխան եզրույթի օգտագործումն է⁶²: Նման մոտեցումը անտրամաբանական է, հատկապես հաշվի առնելով այն խառնաշփոթը, որը 19-րդ դարի վերջից սկսած մինչև այսօր տիրում է համապատասխան եզրույթն օգտագործելու հարցում: Այս հանգամանքը մատնանշվում է բազմաթիվ ուսումնասիրողների կողմից⁶³: Անկախ armistice, truce կամ ceasefire եզրույթների օգտագործումից, յուրաքանչյուր համաձայնության դեպքում անհրաժեշտ է պարզել կողմերի մտադրությունը, այն նպատակը, որին ծառայում է կրակի դադարեցումը:

⁶² Dinstein, "Armistice", in: Max Planck Encyclopedia of Public International Law, Oxford University Press, Vol. 1, 2012, էջ 645:

⁶³ Richard R. Baxter, "Armistices and Other Forms of Suspension of Hostilities, Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 149, էջ 357-358: Sydney D. Bailey, "Cease-fires, Truces, and Armistices in the Practice of the UN Security Council", in American Journal of International Law, Vol. 71, էջ 460 և հաջորդիվ:

«Զինադադարի⁶⁴ համաձայնագիրը բնութագրվում է զինված հակամարտության դադարեցման նախապատրաստման համար հնարավորություն ընձեռելու մտադրությամբ: Դրա նպատակն է ընդմիջտ դադարեցնել ռազմական գործողությունները: Հենց դա է զինադադարը տարբերում հրադադարից»⁶⁵: Թեև Հաագայի 1907թ. կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ զինադադարը կարող է լինել տեղական, այդուհանդերձ, ըստ Ք. Գրինվուդի, «որպես սկզբունք, զինադադարի համաձայնագիրը պետք է ծառայի հակամարտող կողմերի միջև ռազմական գործողությունները դադարեցնելուն և խաղաղ բանակցությունների համար ճանապարհի հարթելուն»⁶⁶:

Կրակի դադարեցման պարագայում հատկապես կարևոր է համաձայնության գործողության ժամկետը: Ըստ Հաագայի 1907թ. կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ նախադասության՝ «եթե զինադադարի ժամկետ չի սահմանվել, ապա պատերազմող կողմերը կարող են ցանկացած պահի վերսկսել ռազմական գործողությունները, սակայն պայմանով, որ հակառակորդը նախապես զգուշացվել է այդ մասին՝ համաձայն զինադադարի պայմանների»: Այս դրույթը, որն ընդունվել է մի այնպիսի պատմական ժամանակահատվածում, երբ պատերազմի իրավունքն օրինական էր, ժամանակակից միջազգային իրավունքում, որի ամենաբնութագրական գիծը ուժի կիրառման արգելքն է, այլևս չի կարող գործել առանց վերապահումների: Ի տարբերություն Հաագայի կոնվենցիայի 36-րդ հոդվածի՝ հակամարտող կողմերը չեն կարող ցանկացած ժամանակ վերսկսել գործողությունները զինադադարի կնքումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքն իրագործվում է ինքնապաշտպանության համար՝ ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան: 1994-1995թթ. զինադադարի համաձայնագրերի պարագայում իրավիճակն առավել պարզ է, քանի որ դրանց տևողությունը, թեև առանց կոնկրետ ամսաթվի, հստակորեն սահմանված էր՝ զինադադարի ռեժիմը պետք է պահպանվեր «ընդհուպ մինչև քաղաքական մեծ Պայմանագրի կնքումը»:

Վերոգրյալի լույսի ներքո հիմնազուրկ է Դինստայնի այն դիրքորոշումը, որը նա արտահայտել էր «Ադրբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի Հանրապետության զինված ագրեսիայի իրավական հետևանքների զեկույցում», որը Ադրբեջանը 2008թ. դեկտեմբերի 24-ին ներկայացրել էր ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին: Դինստայնը 1994-1995թթ. զինադադարի համաձայնագրերը ներկայացնում է որպես միայն կրակի դադարեցում և պնդում, որ «զինադադարը⁶⁷, նույնիսկ եթե երկարատև է, նախատեսված չէ հավերժ մնալու՝ որպես զինադադար:

⁶⁴ Այսինքն՝ ժամանակակից իմաստով՝ armistice, перемирие:

⁶⁵ Christopher Greenwood, "Scope of Application of Humanitarian Law", in: Dieter Fleck, The Handbook of Humanitarian Law in Armed Conflicts-Oxford University Press, USA (2008), էջ 66:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Դինստայնը օգտագործում է ceaser-fire եզրույթը:

Կրակի դադարեցումը պարզապես պետք է լինի դիվանագիտական գործողությունների ցատկահարթակ: ...Սա հենց այն է, ինչին ձգտում է հասնել Ադրբեջանի Հանրապետությունը այս տարիների ընթացքում: Բայց երբ Ադրբեջանի Հանրապետությունը գա հաստատ եզրակացության, որ խաղաղ կարգավորումը, որը հիմնված է Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից Հայաստանի Հանրապետության դուրսբերման վրա, անհասանելի է, նա իրավունք ունի դադարեցնել զինադադարը և վերսկսել ինքնապաշտպանությունը»⁶⁸: Նման մոտեցումը կարող էր իմաստալից լինել միայն անորոշ ժամկետով հրադադարի համաձայնագրերի դեպքում և բացառապես ինքնապաշտպանության նպատակով, մինչդեռ, ինչպես վերևում ցույց տրվեց, 1994-1995թթ. զինադադարի համաձայնագրերը անժամկետ էին և չէին կարող միակողմանիորեն դադարեցվել: Նույն Դինստայնի եզրութաբանությամբ, դրանք զինադադար (armistice) էին ժամանակակից իմաստով և պետք է փոխարինվեին հակամարտող կողմերի միջև համաձայնեցված վերջնական խաղաղության համաձայնությամբ:

2016թ. ապրիլին Ադրբեջանի ագրեսիայից հետո Ադրբեջանը փորձեց հրաժարվել 1994թ. Զինադադարի համաձայնագրից՝ դա ներկայացնելով որպես Հայաստանի կողմից չեղարկված⁶⁹: Միաժամանակ, Ադրբեջանը ցանկանում էր 2016թ. ապրիլի 5-ի երկկողմանի զինադադարի (Հայաստան և Ադրբեջան) բանավոր համաձայնությունը ներկայացնել որպես զինադադարի միակ իրավական հիմք: Ի պատասխան դրան՝ 2016թ. ապրիլի 12-ին Ռուսաստանի Դաշնությունը ԵԱՀԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությանը ուղղված նոտայում 2016թ. ապրիլի 5-ի պայմանավորվածությունը դիտել է որպես «պայմանավորվածություն՝ 2016թ. ապրիլի 5-ից *կրակի դադարեցման ռեժիմի վերականգնման* վերաբերյալ» (ընդգծումը հեղինակինն է): Նոտայում Ռուսաստանը վճռականորեն ընդգծել է, որ 1994-95թթ. համաձայնագրերը «ունեն *անժամկետ բնույթ* և նախկինի պես *հանդիսանում են զինադադարի* (ռուսերեն տեքստում՝ *перемирие*) հիմք»⁷⁰ (ընդգծումը հեղինակինն է): Այս սկզբունքային դիրքորոշումը ամբողջությամբ համապատասխանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների միասնական դիրքորոշմանը⁷¹: Համանախագահ երեք պետությունների արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունում ընդգծվում է, որ «հակամարտությունը ռազմական լուծում չի կարող ունենալ: Համանախագահները պնդել են 1994 և 1995 թվականների զինադադարի համաձայնագրերի հարգման կարևորությունը: Նախագահները վերահաստատել են իրենց հավատարմությունը

⁶⁸ <https://digitallibrary.un.org/record/647306?ln=en>, էջ 11, կ. 27:

⁶⁹ <https://digitallibrary.un.org/record/826825?ln=ru>:

⁷⁰ <https://digitallibrary.un.org/record/828769>:

⁷¹ Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, Vienna, May 16, 2016, https://www.mid.ru/ru/maps/az/-/asset_publisher/OTeVwfjLGJmg/content/id/2283221:

զինադադարին և հակամարտության խաղաղ կարգավորմանը»: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը նույնպես իր 2016թ. ապրիլի 25-ի հայտարարությունում վերահաստատել է նույն մոտեցումը⁷²: Իր հերթին, ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունը, խստորեն դատապարտելով այդ համաձայնագրերը վերանայելու ադրբեջանական իշխանությունների փորձը, դրանք գնահատել է որպես «հերթական պատերազմ սանձազերծելու Ադրբեջանի բացահայտ մտադրություն» և անհրաժեշտ է համարել ամբողջությամբ վերականգնել 1994 թվականի մայիսին հաստատված զինադադարը⁷³:

Այսպիսով, նաև 2016թ. Ապրիլյան պատերազմից հետո Ադրբեջանը միջազգային-իրավական հստակ պարտավորություն ուներ բարեխղճորեն պահպանելու 1994-95թթ. զինադադարի պայմանագրերը ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ՝ Արցախի Հանրապետության հանդեպ: Սակայն Ադրբեջանը կոպտորեն ոտնահարեց իր միջազգային իրավական պարտավորությունները և 2020թ. սեպտեմբերի 27-ին իր դաշնակիցների՝ Թուրքիայի և օտարերկրյա զինյալ ահաբեկիչների անմիջական ներգրավմամբ ագրեսիա սանձազերծեց Արցախի Հանրապետության նկատմամբ:

44-օրյա պատերազմը դադարեցվեց 2020թ. նոյեմբերի 9-ի՝ Ադրբեջանի նախագահի, Հայաստանի վարչապետի և Ռուսաստանի նախագահի հայտարարության⁷⁴ միջոցով, որի 1-ին կետի համաձայն հայտարարվում էր կրակի և բոլոր ռազմական գործողությունների ամբողջական դադարեցման մասին: 2020թ. դեկտեմբերի 3-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների արտաքին գործերի նախարարները 44-օրյա պատերազմի դադարեցումից հետո իրենց առաջին հայտարարությունում, ողջունելով ռազմական գործողությունների դադարեցումը, Ադրբեջանին և Հայաստանին կոչ արեցին ամբողջությամբ իրագործել 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները, *«ինչպես նաև զինադադարի վերաբերյալ իրենց նախկին պարտավորությունները»*⁷⁵ (ընդգծումը հեղինակինն է):

⁷² <https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2016/04/25/statem/6084>:

<https://digitallibrary.un.org/record/827552>: Հայաստանի ԱԳՆ հայտարարությունում մասնավորապես նշվում էր, որ «Ադրբեջանը կոպտորեն ոտնահարում է ինչպես 1994թ. մայիսի զինադադարի, այնպես էլ հարցականի տակ դնում 1994թ. հուլիսի զինադադարի վերահաստատման և 1995թ. փետրվարի զինադադարի ամրապնդման մասին համաձայնագրերը: Հատկանշական է, որ 1994թ. հուլիսի համաձայնագրով Ադրբեջանը պարտավորվել էր «պահպանել զինադադարի ռեժիմը մինչև մեծ քաղաքական պայմանագրի կնքումը»:

⁷³ <https://digitallibrary.un.org/record/828567>:

⁷⁴ https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun-.pdf:

⁷⁵ <https://www.osce.org/minsk-group/472419>:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: